

Մոսկովնու գնացողները Կիսպոնեայ ճան-
ցին, եւն (էջ 97): Այս վերջինքս Ճանիկի
Համէնցիք են: Նոյն աւանին մասին կը
գրէ Բժշկեան. «Մոսկովնու աւան մօտ է
Զարշանպայի (— Հիրիկի կամ Իռիսի ծո-
վախառնունքի մօտ —) բնակիչներն են հայ
Համէնու եկած. եւ ամէնքը զինուոր գրված
որդւոց որդի. եւ ունին զօրապետ հայ
իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ
աչ չունին. միայն Տէրէպէկին հետ պա-
տերազմ կ'երթան. եւ զօրաւոր մարդիկ
են». (անդ՝ էջ 49): — Իսկ Սիւրմէնէ
գացողները՝ որոնք քրիստոնեայ չմնացին,
ոչ թէ այն քաղաքին մահմետական բնա-
կիւնքն են (— որոնք խառնուրդ են հայ,
յոյն, լազ եւն տարերաց, հոչակուած իրր
«ապստամբք եւ աւազակող», Ինճիլճեան,
էջ 393 —) այլ անոր գաւառին եւ առ-
հասարակ Սե-Գեպի հայերն են, որոնց
մասին այժմ քանի մը խօսք ըսել պէտք է:

Սե-Գեպ (թրք. Kara-dere) կը
կոչուին այն ձորերը, որոնք՝ վերը բարձր
լեռնոտին վրայ Համէնի դրացի, վարը ծո-
վու կողմը դէպ ի Սիւրմէնէ կ'իջնան: Բաւ-
ական մեծ լեռնաշխարհ մըն է՝ բազմա-
թիւ գիւղերով, որոնց հայ բնակիչք նոյն-